ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2019-2021թթ. Հայաստանի Հանրապետության պետական պարտքի վերաբերյալ (դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ)









2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) ՀՀ պետական պարտքը կազմել է 4 տրիլիոն 429.6 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.4%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 26.1%-ով,

2) ՀՀ կառավարության պարտքը կազմել է 4 տրիլիոն 209.8 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 7.3%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 28.5%-ով,

3) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 219.8 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.6%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.4%-ով,

4) ՀՀ պետական պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 9 մլրդ 225.6 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 15.8%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 26%-ով,

5) ՀՀ կառավարության պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 8 մլրդ 767.9 մլն. ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 16.8%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 28.3%-ով,

6) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 457.7 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.5%-ով,

7) ՀՀ կառավարության արտաքին պարտքը կազմել է 2 տրիլիոն 969.7 մլրդ ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 1.5%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 16.9%-ով,

8) ՀՀ կառավարության ներքին պարտքը կազմել է 1 տրիլիոն 240.2 մլրդ. ՀՀ դրամ, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 24.3%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 68.2%-ով,

9) ՀՀ Կենտրոնական բանկի արտաքին պարտքը կազմել է 219.8 մլրդ. ՀՀ դրամ, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 8.6%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.4%-ով,

10) ՀՀ կառավարության արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 6 մլրդ 185 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 10.5%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 16.8%-ով,

11) ՀՀ կառավարության ներքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 2 մլրդ 583 մլն ԱՄՆ դոլար, աճելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 35.3%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 68.1%-ով,

12) ՀՀ ԿԲ արտաքին պարտքը դոլարային արտահայտությամբ կազմել է 457.7 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 0.5%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ՝ 6.5%-ով:

ԱԺԲԳ





ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքը 2021 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4 մլրդ 481.1 մլն. ԱՄՆ դոլար, նվազելով 2020թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ 3.95%-ով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նկատմամբ աճելով 4.05%-ով,

2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ կառավարության արտաքին վարկերի գծով պարտքի կառուցվածքում `

1) միջազգային կազմակերպությունների բաժինը կազմել է 77.38%, ինչը ավել է 2020թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշից 0.47 տոկոսային կետով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշից ավել է 2.21 տոկոսային կետով,

2) օտարերկրյա պետությունների բաժինը կազմել է 22.24%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 0.41 տոկոսային կետով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 2.11 տոկոսային կետով,

3) առևտրային բանկերի բաժինը կազմել է 0.38%, ինչը 2020 թ. և 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 0.06 և 0.1 տոկոսային կետերով:





2021թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ կառավարության պարտքի գծով վճարված `

1) տոկոսավճարները կազմել են 180.8 մլրդ. դրամ, ինչը 2020 թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 16.1 և 23.3 մլրդ դրամով:

2) ներքին տոկոսավճարները կազմել են 108.3 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 21.5 և 38.6 մլրդ դրամով:

3) արտաքին տոկոսավճարները կազմել են 72.5 մլրդ. դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար՝ 5.4 և15.3 մլրդ դրամով:

ԱԺԲԳ

Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



Պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը ներքին և արտաքին փոխառու զուտ միջոցների հաշվին (առանց մուրհակների), մլրդ դրամ



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



ՀՀ կառավարության կողմից արտաքին վարկերի ստացումը և սպասարկումը, մլն ԱՄՆ դոլար



2021թ. հունվար-դեկտեմբերին պետական բյուջեի պակասուրդի ֆինանսավորումը՝

1) փոխառու զուտ միջոցների հաշվին կազմել է 590.96 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 236.37 և 357.52 մլրդ դրամով,

2) ներքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 240.06 մլրդ դրամ, ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 60.41 մլրդ դրամով, իսկ 2019թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 138.11 մլրդ դրամով,

3) արտաքին փոխառու միջոցների հաշվին կազմել է 350.9 մլրդ դրամ, ինչը 2020թ. և 2019թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 296.78 և 219.41 մլրդ դրամով:

ՀՀ կառավարության կողմից 2021թ. հունվար-դեկտեմբերին՝

1) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 74.72 մլն դոլար տոկոսավճար, ինչը 2020թ. և 2019 թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 26.4%-ով և 26.8%-ով,

2) արտաքին վարկերի սպասարկման նպատակով մարվել է 229.44 մլն դոլարի մայր գումար, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 7.2%-ով և 36.4%-ով,

3) ստացվել են 178.99 մլն դոլարի վարկային միջոցներ, ինչը 2020թ. և 2019թ.նույն ժամանակաշրջանների համեմատությամբ պակաս է համապատասխանաբար 57%-ով և 49.8%-ով,

4) արտաքին վարկերի սպասարկման նպատակով վճարվել է 304.15 մլն դոլար (տոկոսավճար և մայր գումարի մարում), ինչը 2020թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 3.6%-ով, իսկ 2019թ.նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 12.5%-ով:

ԱԺԲԳ

Պետական պարտատոմսերի ծավալը, մլրդ դրամ



Պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը, օր



ՀՀ Կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը, %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքը, ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության, %



2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի ծավալը կազմել է 1 տրիլիոն 208.9 մլրդ դրամ, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է համապատասխանաբար՝ 708.7 և 527.8 մլրդ. դրամով,

2) Շրջանառության մեջ գտնվող ՀՀ պետական պարտատոմսերի միջին ժամկետայնությունը կազմել է 3761 օր, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ պակաս է 184 օրով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ ավել է 27օրով:

ՀՀ կառավարության պարտքի միջին տոկոսադրույքը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 4.68%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի ցուցանիշի համեմատությամբ ավել է 0.4 տոկոսային կետով, իսկ 2019թ. ցուցանիշի համեմատությամբ պակաս է 0.14 տոկոսային կետով:

ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքում ըստ թողարկման (ներգրավման) ժամկետայնության 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝

1) կարճաժամկետ պարտքի բաժինը կազմել է 1.2%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 0.02 տոկոսային կետով, իսկ 2019թ. դեկնոյեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 0.46 կետով,

2) միջնաժամկետ պարտքի բաժինը կազմել է 9.11%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 2.22 տոկոսային կետով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ մեծ է 2.25 տոկոսային կետով,

3) երկարաժամկետ պարտքի բաժինը կազմել է 89.7%, ինչը 2020թ. դեկտեմբերի 31-ի, ինչպես նաև 2019 թ. դեկտեմբերի 31-ի համեմատությամբ փոքր է 2.19 և 2.7 տոկոսային կետով:

ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ
ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՐՏՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ 2021-2023 ԹԹ. ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՈՒՂԵՆՇԱՅԻՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ (դեկտեմբեր ամսվա վերջի դրությամբ)

ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը, տարի



Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով), %



ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի, %



ՀՀ Կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները, %



ՀՀ կառավարության պարտքի կառավարման 2021-2023թթ. ռազմավարական ծրագրով՝

1) պարտքի մինչև մարում միջին ժամկետի ուղենշային ցուցանիշը սահմանված է 8-11 տարի: ՀՀ կառավարության պարտքի մինչև մարում միջին ժամկետը 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել 8.42 տարի: Այս ցուցանիշը 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ցուցանիշներից պակաս է 0.33 և 0.69 տարով,

2) առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշռի (պետական գանձապետական պարատոմսերի գծով) ուղենշային ցուցանիշը սահմանված է առավելագույնը 20%: Առաջիկա 365 օրվա ընթացքում մարման ենթակա ՀՀ կառավարության պարտքի տեսակարար կշիռը (պետական գանձապետական պարատոմսերի գծով) 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 10.48%, որը 2020թ. դեկտեմբերի 31-ի և 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված մակարդակներից փոքր է 1.04 և 2.18 տոկոսային կետերով,

3) ֆիքսված տոկոսադրույքով պարտքի կշռի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 80%: ՀՀ կառավարության պարտքի կառուցվածքն ըստ տոկոսադրույքի 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել է հետևյալ պատկերը. ֆիքսված տոկոսադրույքով՝ 82.94%, լողացող տոկոսադրույքով՝ 17.06%: Ընդ որում, 2021թ. դեկտեմբերի 31-ի ի դրությամբ արձանագրված ֆիքսված տոկոսադրույքի ցուցանիշը 2020թ. դեկտեմբերի 31-ի համապատասխան ցուցանիշը գերազանցում է 2.53 տոկոսային կետով, իսկ 2019թ. դեկտեմբերի 31-ի նույն ցուցաիշից պակաս է 0.89 տոկոսային կետով:

4) ներքին պարտքի ուղենշային ցուցանիշը սահմանված է առնվազն 25.%, ՀՀ կառավարության ներքին և արտաքին պարտքի կշիռները 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ունեցել են հետևյալ պատկերը. արտաքին պարտք՝ 70.54%, ներքին պարտք՝ 29.46%: Ընդ որում, 2021թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արձանագրված ներքին պարտքի կշռի ցուցանիշը 2020թ. և 2019թ. համապատասխան ժամանակաշրջանների ցուցանիշները գերազանցում է համապատասխանաբար 4.04 և 6.97 տոկոսային կետերով:

Աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության ինտերնետային կայքում հրապարակված Հայաստանի Հանրապետության պետական պարտքի ամսական և տարեկան տեղեկագրերը